

**«ՎԱՄՆ ՄԱՆԿԱՆՆ ԵՒ ԱՂՋԿԱՆՆ»
ԶՐՈՅՑԻ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ
ԾԱԾԿԱԳՐԵՐ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ-ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻ ՆԵՐՔՈՅ**

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Ժ.-ԺԱ. դարերը հայ ժողովրդի պատմութեան մէջ արաբական լծի թօթափմանը յաջորդող խաղաղութեան մի երկարատեւ ժամանակաշրջան էին: Բուռն վերելք էր ապրում ժողովրդական տնտեսութիւնը: Աճում էր երկրի բնակչութիւնը: Բարգաւաճում էին Անին, Կարսը, Արծնը, Դուինը: Բարեւալուում էին ժողովրդի կենցաղային պայմանները: Առաջանում էր դրամական տնտեսութիւն: Մանուկ Աբեղեանի բնորոշմամբ, «դրամը դառնում էր նոր աստուած, շահաւիրութիւնը՝ կենսածն»: Փոխուում էր հասարակական հոգեբանութիւնը: Վերանայուում էին իրաւունքի, կրօնի, բարոյականութեան սկզբունքները: Մեղմանում էին կրօնական խստակենցաղ բարքերը: Անջատուելով եկեղեցական աշխարհայեացքից, աշխարհիկ տրամադրութիւններն արտայայտուում էին ոչ միայն գուսանաց երգերի, այլեւ գրականութեան մէջ, որը սկսում էր դրսեւորել հեթանոսական դարերի աշխարհիկ ոգի եւ աշխարհայեցողութիւն¹: Նոր գաղափարները, աշխարհիկ տարրն ու պատկերները մուտք էին գործում կրօնի քօղով պարուրուած հոգեւոր այլաբանական գրականութեան մէջ, որի հիմքերը մեծ չափով գցուեցին նաեւ թարգմանութիւնների ճանապարհով:

Աշխարհիկ մտտիւններին զուգահեռ, գրականութեան, ինչպէս նաեւ բանահիւսութեան մէջ պահանջ է առաջանում դատապարտել ժամանակի ընչաքաղց ոգին եւ նիւթապաշտութիւնը, երկնային՝ հոգեւոր կեանքից առաւել երկրային կեանքը գերադասելու մտայնութիւնը: Որպէս քարոզչութեան միջոց, ընտրուում է հոգեւոր-այլաբանական, թարգմանական գրականութիւնը: Վերսկսուում է հին թարգմանութիւնների ուսումնասիրութիւնը եւ հակում է առաջանում դէպի յունական փիլիսոփայութիւնը²: Կատարուում են նոր թարգմանութիւններ: Ուշադրութեան են արժանանում հնդկական, պարսկական եւ արաբական աղ-

բիւրներից ծագած գրոյցները, որոնք թարգմանուում եւ ընդգրկուում են Պատմութիւն Պղնձէ Բաղաքին ժողովածուի մէջ: Բոլոր այդ երկերը խրատական ուղղութեամբիւն ունէին եւ արծարծում էին կեանքի ունայնութեան, մահուան առջեւ բոլորի հաւասարութեան գաղափարները³:

Հոգեւոր-այլաբանական գրականութեան իւրօրինակ նմոյշներից է Ժ. դարում թարգմանուած արժէքաւոր մի ստեղծագործութիւն, որը յայտնի է «Պատմութիւն Վասն Մանկանն Եւ Աղջկանն» կամ «Հարցմունք Աղջկան Ընդ Մանկան» անուններով: Այն ընդգրկուած է եղել Պատմութիւն Պղնձէ Բաղաքին ժողովածուի մէջ եւ համարուում է հայ գեղարուեստական արձակի հնամենի նմոյշներից մէկը, որից մինչեւ ԺԹ. դարը կատարուել են բազմաթիւ գրչագիր ընդօրինակութիւններ: Զրոյցի տարբերակներից Ծր, ըստ բովանդակային, խմբագրական եւ մշակման առանձնայատկութիւնների, a, b, c, d, e խմբերի դասակարգմամբ, հրատարակել է Արմենուհի Սրապեանը⁴: Այն, որ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցը հայ միջնադարեան իրականութեան մէջ սիրուած եւ յաճախակի պատմուած թեմա է եղել, վկայում են դրա ժողովրդական տարբերակները՝ հեքիաթների ձեւով: Պահպանուել է 3 հեքիաթ՝ հետեւեալ վերնագրերով. «Հօրն Ու Մօրը Ծախող Տղի Հեքիաթը»⁵, «Հօրն Ու Մօրը Ծախող Տղան» եւ «Հօր Վրայ Նստեց, Մօրը Հագաւ, Մա Մը Խմեց»⁷:

Զրոյցի համառօտ բովանդակութիւնը տարբերակների համադրման համաձայն, հետեւեալն է.

Մի երկրի թագաւոր կամ քաղաքի իշխան անչափ գանձ ունի, բայց չունի որդի: Աստուծոց զաւակ է աղերսում, եւ նրա աղօթքները տեղ են հասնում: Թագաւորին մի գեղեցիկ որդի է ծնւում: Հայրը նրան ուսման է տալիս: Մանուկն ուսումնասիրում է աստուածաբանութիւն եւ իմաստասիրութիւն, դառնում աստղագէտ եւ անյաղթ պատերազմող, սակայն տարւում է կերուխումերով եւ շատ արագ վատնում հօր հարստութիւնը: Վաճառում է հայրենի տունը եւ այնուհետեւ ծնողներին տանում է պանդխտութեան, որ մուրալով ապրեն: Մի երկրի թագաւորին է վաճառում մօրը՝ ձիու դիմաց եւ հօրը՝ ընտիր զգեստի ու գէնքի: Ստանում է ծնողների օրհնութիւնն ու հեռանում ճամփորդելու՝ գանձ ու հարստութիւն վաստակելու նպատակով: Դաշտում ընկերանում է մէկ այլ Մանկան հետ եւ պատմում իր գործած արարքների մասին: Ընկեր Մանուկը նրան է յանձնում իր թղթերը՝ հեռաւոր երկրի թագաւորին

փոխանցելու համար, ասելով, որ թագաւորը իրեն շատ է սիրում եւ նրան մեծամեծ պարգեւներ կ'ընծայի:

Մանուկը ճանապարհ է ընկնում: Դաշտում յիշում է ծնողներին եւ արցունք թափում նրանց համար: Քնում է ձիու վրայ, իսկ ձին կորցնում է ճանապարհը: Ծարաւում են ե՛լ ձին, ե՛լ Մանուկը: Հասնում են մի ջրհորի: Մանուկը ցանկանում է ինքնասպան լինել՝ ջրհորը նետուելով: Քիչ անց, այնտեղից իր քսակով ջուր է հանում եւ խմում: Կարգում է քսակի մէջ գտնուող թրջուած թղթերը, որոնցում ընկեր Մանուկն իր մահն է սահմանել՝ թագաւորին պատուիրելով հաշուեյարդար տեսնել նրա հետ, քանի որ վատնել է հօր հարստութիւնը, ապա ծախել ծնողներին: Մանուկն իրեն սպասուող մահուան մասին իմանալով, պատռում է թղթերը եւ գոհանում, որ ծնողներն իրեն գրագէտ են դարձրել՝ ուսման տալով: Գտնում է ճանապարհը եւ ուղեւորւում թագաւորի քաղաք: Քաղաքում իջեւանում է մի Պառաւի տանը եւ նրանից իմանում, որ տեղի գեղեցիկ, իմաստուն արքայադուստրն ուզում է ամուսնանալ ու այդ նպատակով հարց-հանելուկներ է առաջադրում փեսացուներին: Չպատասխանողներին գլխատում է: Արդէն 99 արքայազնի է սպանել: Մանուկը գնում է Աղջկայ մօտ եւ պատասխանում նրա բոլոր հարցերին, որոնք հիմնականում աստուածաբանական են եւ քրիստոնէական բարոյախօսութիւնն են արտայայտում: Երբ Աղջկայ հարցերը սպառւում են, Մանուկը նրան է ուղղում իր միակ հարցը. «Ո՞վ է այն հարուստը, որ աղքատացաւ, հագաւ իր հօրը, հեծաւ իր մօրը եւ գնաց ապրուստ որոնելու: Իր մահով ջուր խմեց, բայց ապրեց»:

Թէեւ Աղջիկն այս հարցի պատասխանը խորամանկութեամբ կորզում է Մանուկից, այնուամենայնիւ, վերջում ամուսնանում է նրա հետ: Թագաւորը Մանկանն է տալիս իր թագաւորութեան կէսը: Մանուկը փրկագնում եւ իր մօտ է բերում ծնողներին:

«Վասն Մանկանն եւ Աղջկանն» գրոյցն՝ իր տարբերակներով, հետազոտողների ուշադրութիւնը սկսել է գրաւել տակաւին անցած դարասկզբից: Գրականագիտութեան մէջ, Հ. Ներսէս Անդրիկեանի, Հ. Ներսէս Ակիւնեանի, Արշակ Զօպանեանի, Արմենուհի Սրապեանի, Յասմիկ Մկրտչեանի եւ այլոց կողմից փորձեր են արուել դրա նախօրինակը տեսնել հնդկական, պարսկական եւ արաբական բանահիւսութեան մէջ: Կարծիք կայ, որ Պատմութիւն Պղնձէ Քաղաքին ժողովածուի գրոյցների (որոնցից է, ինչպէս նշուեց, այս մէկը) մի զգալի քանակութիւն հնդկական աղբիւրներից ուղղակի կամ միջնորդաւորմամբ, իբրեւ շրջիկ թեմաներ, անցել են նախ պարսիկներին, իսկ վերջիններից՝ արաբ-

ներին, աւելի ստոյգ՝ արարալեզու գրականութեանը: Որոշել այդ զրոյցների նախնական խմբագրութիւնը, որը յետագայ տարբերակումների նիւթ է դարձել՝ հնարաւոր չէ⁸: Համարւում է նաեւ, որ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» զրոյցի զանազան նմոյշներ տարբեր ժամանակներում ներթափանցել են հեքիաթների Հազար Ու Մէկ Գիշեր արարական ժողովածուի մէջ, որի ակունքները մասնագէտների գերակշռող մեծամասնութիւնը դարձեալ բխեցնում է հնդկական գրականութիւնից: Այստեղից թարգմանութիւններ են արուել նախ պարսկերէն, ապա՝ արաբերէն: Արաբ թարգմանիչները յաճախ խմբագրել եւ նոյնիսկ անճանաչելիութեան աստիճանի փոփոխել են այդ ժողովածուի նախնական տեքստերը: Հայր Ն. Անդրիկեանը կարծիք է յայտնել, որ զրոյցը թարգմանութիւն է արաբերէնից եւ սիւժէտային, գաղափարական առումով նմանութիւն է ցուցաբերում Հազար Ու Մէկ Գիշերի հեքիաթների թուին պատկանող Թաւադդուդ աղջկայ պատմութեան հետ¹⁰: Հեքիաթի ամբողջ բարոյախօսութիւնն ուղղուած է ուսման եւ գիտելիքների (կրօնական եւ աշխարհիկ) նկատմամբ սէր քարոզելուն, ինչը կարող է մարդուն փրկել կործանումից¹¹: Համանման կարծիքներ են յայտնել նաեւ Հայր Ներսէս Ակինեանն¹² ու Արշակ Զօպանեանը¹³: Սրապեանը հնարաւոր է համարել, որ նմանութիւնները կարող էին առաջանալ անկախաբար, կամ՝ մի այլ աղբիւրի ազդեցութեամբ¹⁴: Նորերս հնդկական, պարսկական, արաբական հանգունակ զրոյցների եւ հեքիաթների՝ հայկականին մօտ լինելու հարցն աղբիւրագիտական քննութեան է առել արեւելագէտ Յասմիկ Մկրտչեանը եւ եզրակացրել, որ հայկական հնագոյն տարբերակը թարգմանութիւն է արաբական ձեռագրից, որի եբրայատառ արաբերէն չորս պատառիկները պահւում են Սանկտ Պետերբուրգի Սալտիկով-Շչեդրինի անուան Պետական Հանրային Գրադարանում¹⁵:

Հետազօտողների մէջ՝ անխտիր, կասկած չի յարուցում «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» զրոյցի թարգմանութիւն լինելու տեսակէտը (չչփոթենք թարգմանութիւնը նախօրինակի ծագման խնդրի հետ): Այս դէպքում դրա հայերէն մշակման քրիստոնեայ բարոյախօսական ուղղուածութիւնը խորհել է տալիս այն մասին, որ ստեղծագործութիւնն իր բոլոր տարբերակներով, պատկանում է հայ միջնադարեան հոգեւորապաշտական թարգմանական գրականութեան հինաւուրց նմոյշների շարքին: Զրոյցի քրիստոնէական քարոզչութեան մի զգալի մասը կենտրոնացած է Մանկան եւ Աղջկայ հարց ու պատասխանի վրայ, որով մեծ մասամբ մեծարւում է Ս. Գիրքը, տարփողւում են դրանում ամրագ-

րուած վարքականոններն ու քրիստոնեայ հաւատացեալի առաքինի կենսակերպը: Քրիստոնէական քարոզչութեանն են յարմարեցուած ոչ միայն Մանկան կերպարը, այլեւ զրոյցի մօտիւններն ու սիւժէտային կառուցուածքը:

«Մանուկ» եզրի քրիստոնէական բովանդակութիւնն ինքնին ամբողջութեամբ է Նոր Կտակարանում եւ Թովմայի «Հինգերորդ աւետարան» անուանուող տեքստում, ուր շարադրուած են Յիսուս Քրիստոսի այսպէս կոչուած «գաղտնի խօսքերը»: Թովմայի անունը յայտնի է եղել ամբողջ Արեւելքում: Համարուել է Քրիստոսի ժամանակակիցը, որը գրի է առել Փրկչի խօսքերը: Դրանց հիմնական միտումն այն է, որ հարուստներին աշխարհից անվերապահօրէն հրաժարուելու կոչ է անում: Բարոյախօսական քարոզներում ասուում է, թէ մարդիկ կը փրկուեն միայն այն դէպքում, երբ մերկանան «առանց ամօթ զգալու» եւ այդ վիճակում նայեն մէկը միւսին, «ինչպէս դա անում են մանուկները»: Յիսուսի գաղտնի խօսքերից 27րդում մանկանց մասին ասում է. «Յիսուսը տեսաւ մանկանց, որոնք կաթ էին ծծում եւ ասաց իր աշակերտներին. «Մոյն մանկունք, որոնք ծծում են, նման են նրանց, ովքեր արքայութիւն են մտել»: Սրանք հարցրին նրան. «Եթէ մանկունք լինենք, կը մտնե՞նք արքայութիւն: Եւ Յիսուսն ասաց. «Երբ երկուսդ մէկ կը դառնաք, իսկ ներքինը կը դառնայ արտաքին, իսկ բարձրը՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին՝ ցածրը. եւ եթէ տղամարդուն ու կնոջը մէկ միասնութիւն անէք, որ տղամարդն այլեւս տղամարդ չլինի, իսկ կինը՝ կին <...>, այնժամ կը մտնէք արքայութիւն»¹⁶:

Մարկոսի աւետարանում Քրիստոսի մօտ մանուկներ են բերում, որ դիպչի նրանց, բայց առաքեալները սաստում են բերողներին: Քրիստոսը դա տեսնելով, բարկացած ասում է. «Թոյլ տուք մանկտույր գալ առ իս, եւ մի արգելուք զոոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ: Ամէն ասեմ ձեզ, Որ ոչ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ՝ ոչ մտցէ ի նա»¹⁷: Քրիստոսն ինքը մի մանուկ է եւ Ղուկասի աւետարանում իրեն համեմատում է մանկան հետ: Նա բերում է մի մանկան, կանգնեցնում իր կողքին եւ ասում. «Որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա եղիցի մեծ»¹⁸:

Նոյնպիսի մանուկ է նաեւ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» զրոյցի Մանուկը, որի գործողութիւնները բխում են Ս. Գրքի պատգամներից: Նա Քրիստոսի քարոզած արքայութեանն է ձգտում: Վատնել է հօր գանձ ու հարստութիւնը եւ մեկնել օտար աշխարհ՝ հարստութիւն, այ-

սինքն արքայութիւն գտնելու յոյսով: Նոյնը քարոզում էր Քրիստոսը. «Երանի աղքատացող հոգով, զի ձեր է արքայութիւնն Աստուծոյ: Երանի որ քաղցեալ են այժմ, զի յագեցին. երանի որ լան այժմ, զի ծիծաղեսցին... Ուրախ լիջիք յառուր յայնմիկ եւ ցնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս... Բայց վայ ձեզ մեծատանցող, զի ընկալայք զմխիթարութիւն ձեր: Վայ ձեզ որ յագեալդ էք այժմ, զի քաղցիցէք. վայ ձեզ որ ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք, եւ լայցէք...»¹⁹: Մի հարուստ մարդ Քրիստոսին հարցնում է. «Վարդապետ բարի, զի՞նչ արարից զի կեանսն յաւիտենականս ժառանգեցից»: Յիսուսը պատասխանում է նրան. «...եթէ կամիս կատարեալ լինել, երբ, զոր ինչ ունես վաճառեա եւ տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս. եւ առ զխաչն եւ եկ զկնի իմ»: Այս ասելով, սկսում է քարոզել իր աշակերտներին. «Չիարդդ դժուարին է որ զինչսդ ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ... Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել»²⁰:

Հօրն ու մօրը, մերձաւոր հարազատներին «վաճառելու», այսինքն Աստուծոյ սիրուն երկրորդելու մտայնութիւնը նոյնպէս արձանագրուած է Աւետարանում՝ Քրիստոսի քարոզների մէջ: Յիսուսի աշակերտներից Պետրոսը հարցնում է իր վարդապետին, թէ ինչպէ՞ս կարելի է փրկուել եւ մտնել երկնային արքայութիւն: Ուսուցիչը պատասխանում է. «Ամէն ասեմ ձեզ, ոչ ոք է որ եթող գտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ զորդիս կամ զազարակս վասն իմ կամ վասն աւետարանին, եթէ ոչ առնուցու հարւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս եւ եղբարս եւ քորս եւ մարս եւ որդիս եւ ազարակս հալածանօք հանդերձ, եւ յաշխարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտենականս: Չի բազումք եղիցին առաջինք՝ յետինք, եւ յետինք՝ առաջինք»²¹: Ղուկասի Աւետարանում նա դարձեալ նոյն քարոզն է անում իրեն հետեւող ժողովրդին. «Եթէ ոք գայ առ իս, եւ ոչ աւետայ զհայր իւր եւ զմայր եւ զկին եւ զորդիս եւ զքորս, նա եւ զանձն եւս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել»²²:

Այստեղից կարելի է կռահել, թէ ինչու՞ է Ագաթանգեղոսը Հայաստանում քրիստոնէութիւն տարածող Գրիգոր Լուսաւորչի մասին ասում. «Եւ անչափ անջատէր ի հայրենացն բնակացն իւրեանց՝ մինչեւ ասել նոցա, թէ «Մոռացայ զժողովուրդ եւ գտուն հօր իմոյ»»²³: Նոյն կերպ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի Մանուկն է վարւում՝ վատնելով հօր հարստութիւնը, վաճառելով նրա տունը եւ մինչեւ անգամ հայրենիքը: Նա ուսումնասիրել է Ս. Գրքի իմաստասիրութիւնը: Նա քրիստոնէական ըմբռնումներով, արդար մարդն է, որի համար նիւթական աշխար-

հը, հարազատական, արիւնակցական կապերը ոչ մի արժէք չունեն երկնային արքայութեան համեմատ:

Մանուկը թափառող հերոս է: Նա գանձեր է փնտրում օտար թագաւորութիւնում: Այդ թագաւորութիւնը հանդերձեալ աշխարհը պէտք է լինէր՝ երկնային դրախտը, որի գանձերն ու արքայութիւնն էին խոստանում քրիստոնեայ քարոզիչները ճգնակենցաղ հաւատացեալներին: Իսկ այս տեսակէտից Մանկան՝ վաճառուած ծնողներին դաշտում յիշելն ու լաց լինելը հասկացւում է որպէս նրանց հոգու փրկութեան մասին մտատանջութիւն: Ծնողները վայելել են երկրային փառքն ու կարողութիւնը եւ չեն մտածել յետմահու կեանքի մասին: Մանուկը վատնել է այդ կարողութիւնը եւ նրանց վաճառել երկրային թագաւորին: Այլաբանօրէն դա նշանակում է, որ Մանուկը ծնողներին ապաշխարելու հնարաւորութիւն տալով, ինքը գնացել է հանդերձեալ աշխարհ: Եթէ դա այդպէս է, ապա ծնողների վաճառքն աւելի շուտ գրաւ է յիշեցնում: Զրոյցի բոլոր տարբերակներում ծնողները զարմանալի հնազանդութիւն են ցուցաբերում Մանկան կամքի առջեւ, անտրտունջ ասելով. «Դու գիտես որդեակ»: Սա, իհարկէ, այսպէս չպէտք է լինէր ստրկութեան վաճառուող մարդկանց համար, այն էլ այն դէպքում, երբ վաճառողը հարազատ զաւակն է: Մինչդեռ մի տարբերակում (ձ խումբ)²⁴ ծնողներն իրենց աղքատացման պատճառը Հին ու Նոր Կտակարանները չիմանալն են համարում եւ Մանկանն Աստուածաշուքն ուսանելու տալուց յետոյ, նրա հետ կամովին մեկնում են մի այլ երկիր, որտեղ էլ վաճառուում են: Սրանից երեւում է, որ Մանկան հայրն ու մայրը նոյնպէս ապաշխարելու հակումներ ունեն: Նրանք ստրկութեան են դրուած երկրային թագաւորի մօտ եւ պէտք է փրկագնուեն իրենց իսկ ապաշխարանքի դիմաց:

Որտեղի՞ց է սկսւում Մանկան մուտքը հանդերձեալ աշխարհ: Դաշտում ընթանալիս, նա քնում է ձիու վրայ, եւ ձին կորցնում է ճանապարհը: Երբ արթնանում է, ծարաւում են ե՛լ ինքը, ե՛լ ձին: Պատահում են մի ջրհորի, եւ Մանուկը, որ տրամաբանօրէն պէտք է մտածէր նախ ծարաւը հագեցնելու մասին, մտածում է վերջ տալ կեանքին՝ ջրհորը նետուելով (ձ խումբ)²⁵: Այս հանգամանքը նրա մահուան ձգտումի խօսքն վկայութիւններից է, եւ մահը տուեալ դէպքում պէտք է տեղի ունենայ ջրհորի միջով²⁶:

Մանուկի՝ ջրհորն իջեցուած քսակի կամ գդակի մէջ թղթեր կան, որոնցում իր մահն է սահմանուած: Նա դաշտում հանդիպել է իր նման մի Մանկան եւ ընկերացել հետը: Պատմել է իր մասին, իսկ Ընկեր Մանուկը որոշել է մահուան մատնել նրան, օտար աշխարհի թագաւորի

ձեռքով: Ընկեր Մանուկն այդ թագաւորի որդին է, սիրելին եւ գանձապետը: Մանկանը խնդրել է թղթերը յանձնել նրան եւ փոխարէնը մեծ պարգեւ ու հարստութիւն ստանալ, իսկ իրականում դատաստան է պահանջել նրա համար: Մանուկն այդ մասին իմանում է միայն այն ժամանակ, երբ քսակով (հարստութեան նշան) ջրհորից հանած ջուր է խմում: Քսակում թղթերն են, որոնք թրջւում են: Մանուկը կարդում, հասկանում է, որ իրեն մահ է սահմանուած եղել եւ գոհանում, որ ուսում (աստուածաբանութիւն) ու գրագիտութիւն է ստացել: Այնուհետեւ օտար աշխարհում տեղի է ունենում նրա հանդիպումը Պառաւի հետ, որը հիւրընկալում է նորեկին եւ յայտնում քաղաքին ահաբեկած Աղջկայ՝ թագաւորի դստեր մասին:

Այս սիւժէն բացառիկ հարագատութեամբ կրկնւում է տարբեր ժողովուրդների, այդ թւում հայկական բանահիւսութեան մէջ տարածուած երեք եղբայրների մասին առասպելական ծագումով հեքիաթների նախադրութիւնը, որի համաձայն, թագաւորի երեք զաւակները ճանապարհւում են կորած արքայադուստրերին փնտրելու (ամուսնութեան ձգտում), կուրացած հօր աչքերի դեղը գտնելու կամ ուղղակի բախտ որոնելու նպատակով: (Նմանօրինակ հեքիաթների առասպելականութիւնը վաղուց նկատել են երախտաշատ հայագէտ Մանուկ Աբեղեանը եւ ռուս անուանի բանագէտ Վլատիմիր Տոպորովը²⁷): Աւագ եղբայրները կրտսերին իջեցնում (կամ դաւաճանաբար զցում) են հորը կամ ջրհորը, եւ նա յայտնում է հանդերձեալ աշխարհում: Այստեղ հիւրընկալւում է մի Պառաւի տանը, նրանից ջուր է խնդրում ծարաւը յագեցնելու համար, սակայն Պառաւը յայտնում է, որ քաղաքի ջրի ակը փակել է սոսկալի վիշապը եւ ջուր է բաց թողնում միայն մարդկային գոհեր (աղջիկներ) ստանալուց յետոյ: Կրտսեր եղբայրը գնում, յաղթում է վիշապին Փիզիկապէս, այնպէս, ինչպէս Մանուկը՝ Աղջկան՝ հոգեւոր-իմացական ասպարէզում: Հայկական հեքիաթներից կարելի է յիշատակել «Անմահական Խնձոր»²⁸, «Ուսկէ Խոունձուրուն Նաղրը»²⁹, «Հագարան Բլբուլ կամ Այո Դինոյի Նաղրը»³⁰, «Ղուշ Փարին»³¹, «Աժդահակը»³² եւն.:

Թէ որքան հին են դաշտում թափառելու, ծարաւելու, ջուր գտնելու, քնով անցնելու, ապա վիշապից աղջիկ ազատելու մոտիւնները, փաստում է նաեւ *Ռոստամ-Ջալ* հայ-իրանական էպոսը: Ռոստամը խիստ ծարաւում է աւերակ դաշտի մէջ եւ ջուր է փնտրում: Գտնում է մի աղբիւր: Ծարաւը յագեցնում ու քնում է: Արթնանում՝ տեսնում է, որ իր ճանապարհի ընկեր Բեժանգի վրայ են յարձակուել 7 դեւերը (վիշապները)՝ աղբիւրի տէրերը: Երկուսով սպանում են նրանց: Այնուհետեւ Բեժանգը

սպանում է Ֆռնդա դեւին եւ ազատում նրա առեւանգած աղջկան: Ռուստամն օտար աշխարհում հանգրուանում է մի պառաւի տանը եւ նրա խորհուրդներով ու օգնութեամբ սպանում քայլելիս գետնի վրայ ակօսներ բացող Սալմանէ Սնդիին³³:

Քանի որ գրականագիտութեան մէջ, ինչպէս ասուեց, գերակայում է այն կարծիքը, թէ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցը թարգմանութիւն է արաբերէնից, ապա տեսնենք՝ արաբական բանահիւսութեան մէջ կա՞ն արդեօք համանման մոտիւններ, որոնք նկարագրում են հանդերձեալ աշխարհ ընկած հերոսին: Այդպիսի սիւժէ հանդիպում է Հազար Ու Մէկ Գիշեր ժողովածուի մէջ: Հեքիաթը կոչւում է «Պառաւի Եւ Ուխտաւորի Պատմութիւնը»³⁴: Սկսւում է այսպէս. «Ուխտատուրներից մի մարդ քնեց երկար քնով, իսկ յետոյ արթնացաւ եւ ուխտատուների հետքերը չտեսաւ: Եւ նա վեր կացաւ եւ գնաց եւ շեղուեց ճանապարհից, եւ շատ չանցած, տեսաւ վրան: Եւ վրանի մուտքի մօտ նա տեսաւ ծեր կնոջ, իսկ նրա կողքին՝ քնած շան: Եւ մարդը մօտեցաւ վրանին, ողջունեց պառաւին եւ ուտելիք խնդրեց, եւ պառաւն ասաց. «Գնա այ այն հովիտը, օձեր որսա այնքան, որքան քեզ կը հերիքի, իսկ ես կը խորովեմ եւ կը կերակրեմ քեզ»:

Այս նախաբանից պարզ է դառնում, որ ուխտաւորը օտարերկրեայ մի վայր է ընկել, ուր միւս ուխտաւորների հետքերը չեն երեւում, եւ այդ վայրը պէտք է որ հանդերձեալ աշխարհը լինի: Ընդհանուր առասպելաբանութեան մէջ հանդերձեալ աշխարհի արարածներ են համարւում եւ շունը, եւ օձերը³⁵: Մանկան եւ աղջկայ գրոյցի հետ եղած զուգահեռ մոտիւններից են քնելով ճանապարհից շեղուելն ու օտար աշխարհ ընկնելը:

Զրոյցի Մանկան քունն էլ հանդերձեալ աշխարհ ընկնել է նշանակել: Այդ մասին վկայում են նախեւառջ հայկական հաւատալիքները, որոնց համաձայն, քնելը եւ մեռնելը հաւասարաթէք հասկացութիւններ են: Դա պարզօրէն երեւում է ժողովրդական հանելուկներից, ուր գիշերային քնի մէջ ընկղմած մարդիկ տապալում, զոհ են գնում, կամ լուսածաղի աւետարբեր աքաղաղն ազդարարում է Քրիստոսի յարութիւնը մեռելներից³⁶: «Ննջել» բառը հայերէնում համազօր է քնելուն եւ մեռնելուն, ինչպէս՝ «մահիճ»ը, որը եւ անկողնի իմաստն է արտայայտում, եւ իր մէջ կրում է «մահ» արմատը: Հայ մատենագրութիւնից աւանդուած է. «Անկողին.. ի մահի իջումն է... մահիճք վասն այնր ասի»³⁷: Հայկագեան բառարանը բացատրում է նաեւ մարմնական մահուան եւ յարութեան իմաստով. «վախճանիլ. մեռանիլ յուսով յարութեան»³⁸

Սակայն դառնանք արարական հեքիաթի շարունակութեանը: Այստեղ եւս ուխտաւորը, ինչպէս երեք եղբայրների հեքիաթներում հանդերձեալ աշխարհ ընկած կրտսեր հերոսը, ծարաւը յագեցնելու համար Պառաւից ջուր է խնդրում, իսկ Պառաւն առաջարկում է խմել առուակի ջրից, որը շատ դառն է (հայկական հեքիաթներում՝ ցեխանման): Ուխտաւորը զարմացած հարցնում է, թէ ինչպէ՞ս է Պառաւն ապրում այնպիսի մի տեղ, ուր ջուրը դառն է, իսկ ինքը ստիպուած է օձերով կերակրուել: Դրան հետեւում է Պառաւի հարցը. «Իսկ ինչպիսի՞ն են ձեր երկրները»: Ուխտաւորը նկարագրում է երկրային բարիքները՝ ընդարձակ տներով, հասուն, քաղցր պտուղներով, առատ ջրաւազաններով եւ գառների հօտերով: Այնժամ Պառաւն ասում է. «Լսել եմ այդ մասին: Ասա ինձ, ձեզ մօտ կա՞ն սուլթաններ, որոնք դատում են ձեզ եւ նեղութիւն պատճառում իրենց դատաւճիռներով, երբ դուք նրանց իշխանութեան տակ էք, եւ եթէ ձեզանից որեւէ մէկը մեղք է գործում, վերցնո՞ւմ են նրա ունեցուածքը եւ մսխում, իսկ երբ կամենում են՝ վռնդում են ձեզ ձեր տներից եւ քնաջնջում ձեր ցեղը»: «Դա պատահում է, - պատասխանում է ուխտաւորը. Եւ այնժամ Պառաւն ասում է. - Այդ դէպքում, երդում եմ Ալլահով, այդ նրբին կերակուրները եւ հիասքանչ կեանքը եւ քաղցր բարիքները նեղութիւնների ու անարդարութիւնների հետ մէկտեղ թոյն կը լինեն, իսկ մեր ուտելիքներն անվտանգութեան հետ մէկտեղ՝ օգտակար դեղորայք»:

Այս երկխօսութիւնն, իհարկէ, երկրային կեանքի ունայնութեան եւ հանդերձեալ աշխարհի փառաւորութեան մասին կրօնական, ասկետական քարոզ է: Հանդերձեալ աշխարհը Պառաւի երկիրն է, ուր չկան ոչ սուլթաններ, ոչ էլ նրանց անարդար հալածանքները: Նրա աշխարհը երկրից դուրս գտնուող տարածութիւն է, ուր ընկել է ուխտաւորը, այսինքն, ապաշխարող հերոսը:

Այստեղ հարկ է յիշել երրայատառ արաբերէն այն ձեռագիրը, որից Յարութիւն Մկրտչեանը թարգմանուած է համարում «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի հայերէն ձեռագրի հնագոյն տարբերակը: Մի դրուագում արաբական օրինակը հայկականին նմանուելու հետ մէկտեղ ունի շատ էական տարբերութիւններ: Նմանութիւնն այն է, որ ե՛ւ հայկական, ե՛ւ արաբական ձեռագրերում պատանին (Մանուկը) ճանապարհին հանդիպում է մէկ այլ ձիաւոր պատանու, որից նամակ է ստանում թագաւորին փոխանցելու համար: Արաբական ձեռագրում տղան նամակը դնում է թաշկինակի մէջ, հայկական ձեռագրերում՝ քսակի: Ե՛ւ հայկականում, ե՛ւ արաբականում նա ճանապարհին խմելու ջուր է

փնտրում, բայց արաբականում չի գտնում, իսկ հայկականում գտնում է ջրհորը: Արաբականում ջրի երկար որոնումներին ձին քրտնում է, իսկ տղան քանդում է թաշկինակը, սրբում ձիու քրտինքի ջուրը եւ խմում, իսկ հայկականում ջուրն իր քսակով հանում է ջրհորից³⁹: Այս դրուագը ցայտունորէն ապացուցում է, որ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի վերաբերեալ հայ իրականութեան մէջ, արաբական բնօրինակից անկախ, բոլորովին ինքնուրոյն մօտիւններ են գոյութիւն ունեցել, որոնք միանգամայն նոր հորիզոններ են բացում մեր առջեւ, տուեալ դէպքում մատնանշելով ջրհորի միջով հանդերձեալ աշխարհ տանող ճանապարհը, որով գնում է հեքիաթային երրորդ հերոսը: Հեքիաթներում նա պէտք է խմէր Պառաւի առաջարկած ջուրը, սակայն «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցում ծարաւը յագեցնում է ջրհորից քսակով հանած ջրով, որի մէջ իր մահն է սահմանուած: Ուրեմն Մանուկն իր մահն է խմում, եւ այդ իրողութիւնը պէտք է նրա, իբրեւ մեռնելու փաստ ընդունել:

Այս ամէնը մեզ հիմք է տալիս կասկած յայտնել «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի հայերէն հնագոյն օրինակի՝ արաբերէնից թարգմանուած լինելու տեսակէտի կապակցութեամբ, մանաւանդ այն պարագայում, երբ արաբերէն եւ եբրայատառ արաբերէն ձեռագրերի քննական բնագրերն առաջօր հրապարակուած չեն, իսկ Մկրտչեանն իր գիտական թեզը հիմնաւորելու համար հիմք է ընդունել սոսկ իր ձեռքի տակ եղած միակ բնագիրը: Այդուհանդերձ, եթէ գրոյցը նոյնիսկ թարգմանուած էլ համարելու լինենք արաբերէնից, միեւնոյն է, իր առանցքային որոշ մօտիւններով ծագումնաբանօրէն աւելի հարազատութիւն է ցուցաբերում Հին Արեւելքից եկող հաւատալիքների, քան, դիցուք, քրիստոնէական կամ մահմեդական աւանդութեան հետ: Ոստքն առաջին հերթին վերաբերում է հանդերձեալ աշխարհ ընկած Մանկան եւ Աղջկայ հանդիպմանը, որից յետոյ է որոշուում՝ հերոսին վիճակուած է արժանանալ երկնային արքայութեան գանձերի⁴⁰, թէ՞ նա կործանուելու է, ինչպէս Աղջկայ հրամանով գլխատուել ու կորստի էին մատնուել 99 արքայազնները: Կրօնադիցաբանական այսպիսի ըմբռնման մենք ականատես ենք լինում բոլորովին էլ ոչ մահմեդական (արաբական) միջավայրում, այլ իրանական նախախաւածական՝ զրադաշտական հաւատալիքներում: Վենդիգատուն մարդկային հոգիների մասին ասուում է, որ «Երբ առաքինիների հոգիներն անցնում են ուրիշ աշխարհ, աստղերը, լուսինը եւ արեւը օրհնում են նրանց»⁴⁰: Յատուցման Զինվառ կամուրջն անցնելուց յետոյ առաքինի հոգուն ջահել աղջկայ կերպարանքով հանդիպում են նրա բարի գործերը: Այնուհետեւ առաջին, երկրորդ եւ երրորդ քայլերով մուտք

է գործում բարի մտքերի, բարի խօսքերի եւ բարի գործերի երկինքները: Չորրորդ քայլով հասնում է անվախճան Լոյսին, որն ինքը՝ երանութիւնն է: Մեղաւոր հոգին նոյնպէս հանդիպում է աղջկայ, երբ կամուրջից սայթաքում եւ ընկնում է անդունդը: Այդ ժամանակ նրան ընդառաջ է գալիս դարձեալ «ջահել մի աղջիկ, որն ամենեւին էլ նման չէ ջահել աղջկայ»: Այնուհետեւ անցնում է չար մտքերի, չար խօսքերի եւ չար գործերի երեք դժոխքներով ու յայտնւում Ահրիմանի առջեւ⁴¹:

Իրանական *Եռւշտի Ֆրիան* գրական յուշարձանում մեղաւոր հոգիներին հանդիպող այդ աղջիկն Ախտի Եատուկ կախարդն է (վհուկը՝ Զատուկը, որ իզական կերպարանքով է պատկերացւում): Նա հանելուկներ առաջադրողի դերակատարութիւն ունի: Գլխատում է 900 մարդու, որոնք պարտւում են իր հարցերին չպատասխանելով: Յայտնւում է Եռւշտի Ֆրիանը, ով իր ժամանակակիցների մէջ ամենաառաքինի մարդու համբաւն ունէր, պատասխանում է Ախտի հանելուկներին եւ կործանում նրան⁴²:

Թէ իրանական ականդութեան մէջ որքան խոր հնութիւն ունի կնոջ առջեւ առաքինութեան քննութիւն յանձնելու այս մոտիւր, վկայում է Աւեստայի Աբան Եաշտը, ուր յիշատակւում է Ֆրիաներից Եոհշտան, որ գոհեր էր մատուցում Արդուի Սուրա Անահիտային՝ չար ու նսեմ Ախտիայի հարցերին ճիշտ պատասխաններ գտնելու եւ նրան յաղթելու համար⁴³: Եռւշտի Ֆրիանի մասին պատմող մատեանում էլ շեշտւում է երկրային կեանքում աստուածահաճոյ գործեր կատարելու քարոզը, որպէսզի մարդ յետագայում երկնային դրախտի արժանանայ⁴⁴:

Նոյնը վերաբերում է նաեւ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցում Մանկան՝ ծնողների դէմ մեղանշելու՝ «վաճառելու» մոտիւրին, որի ծագումը եւս չպէտք է քրիստոնէութեանը կամ մահմեդականութեանը վերագրել⁴⁵: Այսպիսի մոտիւ հանդիպում է հելլենական դիցաբանութեան մէջ, ուր հանելուկ լուծողի դերում երեւան է գալիս Լայոսի որդի Էդիպոսը: Նա ծնուած օրից Թերէ քաղաքում լքուել է ծնողներից եւ չի ճանաչում նրանց: Լեռներում մեծանալով, ուղեւորւում է Թերէ, ուր քաղաքին ահաբեկել է կոյսի դէմքով, առիւծի մարմնով, արծուի թեւերով եւ օձ պոչով Սֆինքսը: Նա հանելուկ է առաջադրում բնակիչներին եւ ճիշտ պատասխան չստանալու դէպքում խեղդում է նրանց: Էդիպոսը ճանապարհին հօրը հանդիպելով, անգիտութեամբ սպանում է նրան, ապա լուծում է Սֆինքսի հանելուկը եւ քաղաքն ազատում հրեշից: Թերէ-ացիները նրան արքայ են կարգում եւ ամուսնացնում Լայոսի կնոջ՝ Իոկաստէի հետ, որն Էդիպոսի հարազատ մայրն է: Ժամանակ անց, երբ

էղիպոսն իմանում է, որ հայրասպան է դարձել եւ արիւնապղծուել մօր հետ, կուրացնում է իրեն եւ դեգերում մահուան արահետներով⁴⁶:

Վ. Ն. Եարխոն Սոֆոկլէսի «էղիպոսը Կոլոնում» ողբերգութեան առիթով գրել է, որ հերոսի «...ամբողջ վարքագիծը ներթոնուած է ճշմարտութեան անվերջանալի փնտրտութիւն»⁴⁷: Ս. Ս. Աւերինցեւն էղիպոսին զնահատելով, իրրել ներհայեցողական գիտելիքներ փնտրող կերպար, նրա՝ մօր հետ ունեցած արիւնապղծութիւնը պայմանաւորուած է համարել սրբազան իմացութեան հասնելու ձգտումով: Հնում արիւնապղծութեան արգելքի խախտումը հաւասար է դիտուել իմաստնութիւն ձեռք բերելուն: Հետաքրքիր է, որ այդ կերպ է բացատրուում, օրինակ, պարսից մոգերի՝ իրենց մայրերի եւ դուստրերի հետ կենակցելու պարտադիր սովորոյթը⁴⁸: Պրոպան այս տեսակէտերին համակարծիք լինելով, իր հերթին աւելացնում է, որ էղիպոսի՝ հօրը հակադրուելուն՝ նրան սպանելու մոտիւր ծագում է մայրիշխանական ժամանակներից, երբ որդին չի ճանաչում թափառ կեանքով ապրող հօրը, ուղեւորուում է նրան փնտրելու եւ ճանապարհին հանդիպելով, առանց իմանալու, թէ ով է, հակամարտութեան է բռնուում հետը⁴⁹:

էղիպոսի առասպելում հերոսը գիտակցել է իր անգօրութիւնը նախախնամութեան կամքի առջեւ, որ գուշակել էր իր մեղանշումը ծնողների դէմ⁵⁰: Նա մինչեւ մրուրը պարպել է դառնութեան բաժակը եւ իր մահն է փնտրում՝ ընթանալով իմաստնութեան ճանապարհով: Դա դէպի յաւերժը տանող ուղին է, որ հակադրուած է նիւթական, տեսանելի աշխարհին: Էղիպոսի ինքնակուրացումն էլ, ինչպէս ճիշտ նկատել է Աւերինցեւը, ուղղուած է սրբազան իմացութիւն ձեռք բերելու նպատակին: Յունական մշակոյթում վառ կերպով արտայայտուած է իրերի եւ երեւոյթների նկատմամբ մարմնական տեսողութեան անլիարժէքութեան պատկերացումը, ըստ որի, մարմնական աչքերով կարելի է տեսնել միայն դրանց թուացեալ, երեւութական կողմը: Իսկ իմաստունը պէտք է գրկուած լինի աչքերի լոյսից, որպէսզի կուրութեամբ տեսնի անտեսանելին⁵¹:

Իմացութիւն, գիտելիք՝ «գնոսիս» յունական եզրը Պլատոնի ժամանակներից սկսած, սկսել էր ձեռք բերել ոչ թէ մարդուն չըջապատող իրերի եւ երեւոյթների բանական/ռացիոնալ, այլ անբանական/իռացիոնալ բացատրութեան նշանակութիւն: «Գնոսիս»ի իւրացումը դիտոււմ էր ոչ իրրել հասարակութեան, այլ ընտրեալների՝ հոգեպէս շնորհալինների մենաշնորհ: Քրիստոնէական աշխարհայեացքում արդէն այս ուսմունքը շեշտադրուում է բարու եւ չարի, լոյսի եւ խաւարի, ոգու եւ նիւ-

թի հակամարտութեան հասկացութիւնների մէջ: Առաջին քրիստոնեաների քարոզներում խօսւում է այն «գաղտնիքի յայտնութեան» մասին, որը ժողովուրդներին ազդարարում է Աստուած՝ հաւատքին հնազանդուելու համար: Քրիստոնէական աւանդոյթների ծաղկման շրջանում «գնոսիս»ի դիրքերից սկսեց դիտարկուել արդէն աշխարհում չարի գոյութեան հիմնախնդիրը, որը կապուած էր կրօնական երկարմատութեան (դոկալիզմի) գաղափարի հետ: մարդը չարութեան աշխարհի գերին է եւ երազում է ազատուել այդ գերութիւնից⁵²: Այստեղից էլ ծնունդ են առնում աշխարհատեսացութեան, աստուածային սրբազան գիտելիքներ ձեռք բերելու եւ ապաշխարելու գաղափարները:

Գիտելիքներով իմաստնացած եւ ապաշխարանքի ու մահուան (իրականում՝ անմահութեան) ճանապարհը բռնող նոյնպիսի հերոս է նաեւ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի Մանուկը: Ծնողներն ուսման են տուել նրան: Նա իւրացրել է սուրբ գիրքը, բայց եւ մեղանչել է ծնողների դէմ՝ վաճառքի հանելով նրանց: (Այստեղ նոյնիսկ կարեւոր էլ չէ, թէ որտեղից կարող էր առաջանալ վաճառքի մոտիւր: դրա բացատրութիւնը մեզ չատ հեռուն կը տանէր): Զրոյցի տարբերակներից մէկն անգամ պահպանել է յուշն էդիպոսի առասպելի մասին: Աղջկայ հարցերից մէկն է. «Ո՞րն է այն, որ հարն եւ որդին ի մէկ մօրէ ծնան եւ սուրբ կոչեցան»: Մանկան պատասխանն է. «Այն լատինացին է, որ հայրն մեռել էր եւ որդին է զինուորել, այլ աշխարհ գնացել է, յետոյ եկեր ժամանակաւ ի մօրն տունն դնուիս է եղեր, չեն ճանաչեր՝ զիրար առեր են, երբ իմացեր որդի եղեր է»⁵³: Լատինացու անունը չի տրուում, բայց ակնյայտ է, որ խօսքն էդիպոսի մասին է: Հայ միջնադարեան հոգեւոր-այլաբանական գրականութիւնը նրան նոյնպիսի զինուոր է պատկերացրել, որպիսին գրաբարում «մանուկ» եզրը «պատանի» եւ «սպասաւոր» իմաստներից զատ, ունեցել է «զինուոր», «զօրական» (ըստ երեւոյթին՝ նաեւ Քրիստոսի հաւատքի ռազմիկ՝ «Զինուորեալ մանկունք... եկեղեցւոյ», ինչպէս աւանդուած է հայ մատենագրութիւնից⁵⁴) նշանակութիւնը: Առաւել հետաքրքրական է, որ էդիպոսին սրբի համարում են վերագրել, ինչը, թերեւս, հարկ է բացատրել նրա մասին եղած առասպելի ու «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի մոդէլային եւ որոշ առումով նաեւ գաղափարախօսական նմանութեամբ:

«Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցում կայ եւս մի կարեւոր հանգամանք, որ թւում է, թէ հակասում է Մանկան հանդերձեալ աշխարհ՝ երկնային արքայութիւն ուղեւորութեամբ պարագային: Զէ՞ որ Մանուկն իր մահը սահմանող թղթերը կարդալով, գոհութիւն է յայտնում ստա-

ցած ուսման համար, ինչի շնորհիւ խուսափել էր մահից: Սակայն այստեղ նախ պէտք է հարց տալ՝ ո՞ր մահից է խուսափում՝ ֆիզիկական, թէ՞ հոգեւոր: Հոգեւոր մահ քրիստոնէական ըմբռնումներով նշանակում է հոգու կործանում, մեղաւորների անվերջանալի եւ սահմակեցուցիչ տանջանքներ գեհէնում: Իսկ անմահութիւնը հոգու վերածնունդն է Աստծոյ արքայութիւնում, ինչի մասին Նոր Կտակարանում հրեայ իշխան Նիկողեմոսին քարոզում է Քրիստոսը. «Ամէն ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ: Ասէ ցնա Նիկողեմոս, Զիա՞րդ կարէ մարդ ծնանել որ ծերն իցէ. միթէ մա՞րք ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել եւ ծնանել: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ, Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ: Զի ծնեալն ի մարմնոյ մարմին է, եւ ծնեալն ի Հոգւոյ հոգի է: Դու մի զարմանար թէ ասացի քեզ, Պարտ է ձեզ ծնանել վերստին: Զի հոգմ ուր կամի շնչէ, եւ զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի գայ կամ յո երթայ. յոյնայէս եւ ամենայն ծնեալն ի Հոգւոյն»⁵⁵:

Թէ որքան կարեւոր է քրիստոնեայ հաւատացեալի համար ջրից ծնունելու նախապայմանը, երեւում է ջրով մկրտուելու ծէսից, որից յետոյ համարւում է, թէ մկրտուողը վերածնունեց Սուրբ Հոգուց: Այդպէս անդառնալի մահից փրկւում եւ վերածնունդ է նաեւ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի Մանուկը՝ քսակով խմելով հանդերձեալ աշխարհ տանող ջրհորի ջուրը: Քսակն այստեղ, իբրեւ հարստութեան նշան, խորհրդանշում է երկնային արքայութեան գանձարանից օգտուելու նրա յաւակնութիւնը: Յիսուս Քրիստոսի քարոզներից մէկում էլ ասւում է. «Մի երկնչիր, հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց հնամալոյ, գանձ անպակաս յերկինս, ուր ոչ գող մերձեցայ եւ ոչ ցեց ապականէ»⁵⁶:

Հանդերձեալ աշխարհը, ուր երեք եղբայրների մասին հայկական ժողովրդական հեքիաթներում ջրհորի միջով յայտնւում է երրորդ հերոսը, կոչւում է «Մուկ Աշխարհ», որից նա ձգտում է դուրս գալ «Լոյս Աշխարհ»: Անդրչիրմեան այդ աշխարհի «մուկ» մակդիրը յուշում է ոչ միայն մեռելների խաւարչտին թագաւորութեան, այլեւ, առհասարակ, գիշերուայ գաղափարը, մանաւանդ, եթէ հաշուի առնենք, որ «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցում Մանկան՝ հանդերձեալ աշխարհում յայտնուելուն նախորդում է նրա քունը ձիու վրայ եւ ճանապարհից շեղուելը: Քունն, ինչպէս ասուեց, հայկական հաւատալիքներում մահուա-

նը համարժեք իրողութիւն է դիտուել: Դա երեւաց նաեւ արաբական «Պառաւի Եւ Ուխտաւորի Պատմութիւնը» հեքիաթից, ուր ուխտաւորը քնելով, յայտնուում է այն աշխարհում: Նոյնը կատարուում է զրոյցի Մանկան հետ, որը քնում, այսինքն, մեռնում է, իսկ նրա հոգին ջրհորից ջուր խմելով, վերածնւում է հանդերձեալ աշխարհում: Տեսնենք՝ այդ աշխարհում նկատուում են արդեօք գիշերուայ հետքերը:

Հանդերձեալ աշխարհում Մանկանը հիւրընկալած Պառաւը նրան պատմում է, որ երկրի արքայազուստրն ուզում է ամուսնանալ («Հօր վրայ Նստեց, Մօրը Հագաւ, Մամը Խմեց»), հարցեր կամ հանելուկներ է առաջադրում փեսացուներին, սակայն նրանցից ոչ ոք իմաստնութեամբ չի կարողանում գերազանցել Աղջկան: Քանի որ հարցերին չպատասխանելու պայմանը մահն է, ուստի գլխատում է փեսացուներին: Արդէն 99 փեսայի գլուխ է կտրել:

Մանուկը բախտը փորձելու համար գնում է Աղջկայ ապարանքը: Աղջիկը նստած է մարգարտաշար թախտին (գահին)՝ մի «մուշապախն» վայրում: Ոչ ոք նրան չի տեսնում: Նա տեսնում է բոլորին: Քաղաքին նայում է նրա «դուպպա»ն: Մարդկանց հետ խօսում է պառաւ թարգմանի միջոցով (a խումբ): Մի տարբերակում (d խումբ) նստած է ոսկով ու մարգարիտներով զարդարուած «բարձր չարտախում» (օթեակում-այսինքն, վերելում է), վարագուրածածկ «փանճարայի» (պատուհանի) մօտ:

Աղջիկը Մանկանը ոսկէ աթոռ է առաջարկում եւ սկզբնապէս երեք հարց ուղղում. ա) յ՞որ տաճուտը ե քո ծնունդն, բ) ո՞վ է քո հայրն, գ) ո՞վ է քո դայեկն: Մանկան պատասխաններն են.

ա) Խոյն է, բ) օդն, ամպն եւ անձրեւն, գ) այն է իմ դայեկն, որ մա իմ ձայնն կու լսէ, եւ ես զնորա ձայնն չեմ լսել: Զրոյցի մէկ այլ տարբերակում (b խումբ) Աղջկայ սկզբնական հարցերը երկուսն են. ա) ո՞վ է քո հայրն, բ) ո՞վ է քո մայրն: Պատասխաններն են. ա) հոլմ եւ հուրն, բ) հողն եւ անձրեւն: Այսինքն, Մանուկն իրեն ծնուած է համարում բնութեան չորս տարրերից:

Հարկ է ուշադրութիւն դարձնել ոչ միայն Աղջկայ խորհրդաւոր նկարագրութեանը, այլեւ նրա առեղծուածային երրորդ հարցին՝ նոյնքան առեղծուածային պատասխանին, որով Մանուկը ոչ մի անուն չի տալիս: Իրականում «դայեկն» Աղջիկն է, որը Մանկանը տեսնում է, բայց Մանուկը նրան չի տեսնում, նա Մանկան ձայնը լսում է, բայց Մանուկը նրա ձայնը չի լսում: Ուստի, եթէ սկզբնական հարցերը պարզեց-

նելու լինենք, կը ստացուի երկու հարց՝ երկու պատասխանով. «Ո՞վ ես դու» եւ «Ո՞վ եմ ես»: Առաջին հարցին Մանուկը պատասխանում է իր ծագման մասին տեղեկացնելով: Երկրորդ հարցի կապակցութեամբ ասում է. «Դու դայեկն ես»:

«Դայեկ», այսինքն, «դայեակ» հայերէն բառն, ըստ Հրաչեայ Աճառեանի, փոխառութիւն է պարսկական dayakից եւ նշանակում է «ծծմայր, ստնտու»⁵⁷: Անանիա Շիրակացին «դայեակ» է անուանում կիսալուսնին (այսինքն, այն լուսնին, որի կէսը ոչ ոք չի տեսնում). «Այս գօտին, որ կիսալուսին է համակարգի, սա է դայեակ անձրեաց եւ սնուցիչ բուրաստանաց»⁵⁸: Ուրեմն, եթէ լուսինը անձրեւների եւ բուրաստանների սնուցիչ է, ապա խորհրդանշում է խոնաւութիւնն ու թացութիւնը: Եւ իրօք, հայկական միջնադարեան նշանագրերի աղիւսակում «դայեակ» նշանագիրը տեղաւորուած է հիմնականում խոնաւութիւն, ամպրոպ եւ անձրեւ արտայայտող խորհրդանիշերի սիւնակում՝ «փայլակն», «ցուլ», «վիշապ», «աղեղնաւոր»⁵⁹: Հայկական հաւատալիքներում աւանդաբար, խոնաւութեան, անձրեւաբերութեան յատկանիշներ են վերագրուում Ծովինար Մայր աստուածուհուն⁶⁰, յետագայում զրադաշտականութեան ազդեցութեամբ անուանափոխուած՝ Անահիտ: Վերջինիս մասին մինչեւ նորագոյն ժամանակները ժողովուրդն ասել է. «Սեծամայր ինքը մահն է (լուսին), իրենից է ցայտում Լուսնթակի շողբերը, զիշերը մինչեւ լոյս ինքն է լուսաւորում ամբողջ աշխարհը»⁶¹: «Մահ» բառը դարձեալ ըստ Աճառեանի, հայերէնում փոխառութիւն է պահլաւերէն mahից, որ «լուսին» է նշանակում, ինչպէս որ mahikը՝ «լուսնակ»: Նոյնը եւ հայերէնում են կիսալուսնին «լուսնի մահիկ» ասում, որ փոխառուած է իրաներէնից⁶²:

Այժմ տեսնենք, թէ իրօք, «դայեկ» Աղջկայ արտաքին նկարագիրը լուսնային յատկանիշներ է կրում: Այդ մասին նախ խօսում է նրա բարձր՝ վերեւում գտնուող դիրքը: Նրա «չարտախը» զարդարուած է ոսկով եւ մարգարիտներով, որոնք կարող են փոխարինել ոսկու եւ մարգարիտի նման փայլող աստղերին: Նա թաքնուած է վարագոյրի ետեւում, ինչպէս լուսինն ամպերով է քողարկւում, ինչպէս հայկական հաւատալիքներում է Լուսին թագուհին ամպէ քօղ կրում⁶³: Հայկական աւանդութեան մէջ դէմքին քօղ է կրում Ծովինար Մայր աստուածուհին⁶⁴, որը Մասնայ Ծռեր դիւցազնավէպում ակնյայտօրէն որպէս լուսին է նկարագրւում: Հայոց թագաւորի «քոչկ ու սարի» առջեւից անցնելիս, Սենեքերիմ թագաւորի հարկահաններին մի լոյս է երեւում: Տեսնում են «անցկուն խորոտ աղջըկ մ'իրեաց, արեւուն կ'ըսէր. Դու դուս մ'ըլիր,

իս դուս ըլլիմ: Աղջըկ ընցկուն խորօտ, վուր տըսնուչորս յաւուր լուսնը-
կի կը նմանի, վուր եօթ սարի իտեւէն դուս կու գայ»⁶⁵:

Լուսնի քողը գրոյցում համապատասխանում է այն վայրին, որ
«մուշապախ» է անուանւում: «Մուշապախ»ը կամ «մուշապաք»ն արա-
բերէն mushabbak բառն է, որ նշանակում է բարակ ճիւղերից՝ մետաղա-
լարերից հանգոյցներով հիւսուած յարմարանք, ցանց⁶⁶, այսինքն ծած-
կոց, որի ետեւում է քողարկւում Աղջիկը:

Առաւել արտայայտիչ է նրա «ղուպպա»ն, որ նայում է քաղաքին, ի-
հարկէ՝ դարձեալ վերելից: «Ղուպպա»ն կամ «ղուպպ»ը պարսկերէն
guba բառից է ծագում, բժշկագիտական եզրաբանութեամբ, ցան, մաշ-
կացան հիւանդութիւնն է⁶⁷, «փսորիագը»⁶⁸: Դրա հետեւանքներից մէկն
այն է, որ դէմքի վրայ ցան է առաջանում, ինչպէս «ծաղիկ» հիւանդու-
թեան ժամանակ: Հայկական աւանդութեան մէջ էլ Լուսնին «ծաղիկ»
հիւանդութիւն եւ ծաղկատար դէմք է վերագրւում: Լուսինն, ասում են,
մի ժամանակ եղբօր՝ Արեւի հետ է ելումուտ արել, բայց քանի որ շատ
գեղեցիկ էր, չար աչքը դիպել էր նրան եւ «ծաղիկ» հիւանդութեան
պատճառ դարձել: Լուսնի երեսի բծերն էլ այդ հիւանդութեան նշանն
են⁶⁹:

Հարկ է յիշատակել նաեւ Սանկտ Պետերբուրգի Արեւելագիտու-
թեան Ինստիտուտում պահուող պարսկերէն մի ձեռագիր, որը մեր
կարծիքով, բովանդակութեան այլաբանութեան առումով, աւելի հարա-
գատ է «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի հայերէն բնագրերին, քան
արաբականը: Տեքստի լուսապատճէնն ամբողջութեամբ գտնւում է
Մկրտչեանի մօտ, որը հրապարակել է դրա մասնակի թարգմանութիւնը
միայն⁷⁰: Այստեղ նոյնպէս Աղջիկը Տղային (Մանկանը) իր հարցերն ուղ-
ղելիս, գերադասում է քողարկուած մնալ եւ այդ պատճառով դիմակ է
կրում: Նրա սկզբնական հարցերն էլ նոյնն են. «Ու՞մ տղան ես, եւ դայ-
եակդ ո՞վ է, եւ մայրդ ու հայրդ ովքե՞ր են»: Տղայի՝ Աղջկան ուղղած
հարցը հետեւեալն է. «Այն ո՞ր արքայազնն է, որ դժբախտացաւ եւ գա-
հից տապալուեց հողին ու արքայութիւնից՝ մուրացկանութեան [մէջ],
եւ ծնողներին վաճառեց եւ ապրուստ փնտրելու ու մահուանն ընդա-
ռաջ գնաց, եւ երեկոյեան նամագից մինչեւ լուսաբաց մահուան հետ էր,
լիակատար մահուան ճամփին ինչ-որ բան պատռեց ու ջրհորը գցեց
[...], (նամակը - Գ.Մ.), մէկ այլ մահ նրան բռնեց, եւ այդ մահուան հետ
շատ վեճեր ունեցաւ ու վերջապէս դրան էլ յաղթեց, եւ կրկին անգամ
քնած բախտն արթնացաւ»:

Տղայի այս հարցը եզրափակում է Աղջիկ-Լուսնի, իբրեւ հանդերձեալ աշխարհի՝ գիշերուայ ներկայացուցչի մասին մեր վերոբերեալ ղիտարկումները⁷¹։ Տղան, ինչպէս տեսնում ենք, Աղջկան ուղղակի «մահ»՝ իրաներէն «լուսին» է անուանում, իսկ իր ընթացած ուղին՝ «լիակատար մահուան (այսինքն, հանդերձեալ աշխարհի) ճանապարհ», որն, իհարկէ, դարձեալ սկսւում է ջրհորից։ Տղան Մահուանը (Լուսնին) տեսնում է գիշերուայ ընթացքում, քանի որ նրա հետ է երեկոյեան նամագից մինչեւ լուսաբաց։

Մնում է միայն վեր հանել հայկական ձեռագրերում Մանկան հարցի մէջ թաքնուած այլաբանական մէկ այլ իմաստ եւս։ Եթէ արդէն գիտենք, որ «մահ»ը նաեւ Լուսինն է՝ Աղջիկը, որը գլխատում էր փեսացու արքայազններին, ապա Մանկան հարցը, թէ՛ «Այն ո՞վ էր, որ իր մահը խմեց, բայց ապրեց», կարելի է մեկնաբանել նաեւ հետեւեալ կերպ՝ «Այն ո՞վ էր, որ մահուան սպառնալիքի ներքոյ պատասխանեց «Մահուան» (Լուսին-Աղջկայ) հարցերին եւ ապրեց»։ Ստացւում է, որ զրոյցում Աղջկայ՝ Մանկանն ուղղած «Ո՞վ է դալեկդ», այսինքն. «Գիտե՞ս ում հետ գործ ունես, եւ ո՞վ եմ ես, որ Լուսինն եմ» հարցը Մանուկը վերջում վերադարձնում է Աղջկան. «Ո՞վ էր այն Մահը (Լուսինը), որ մահ էր սփռում», ապա յաւելում է. «Եւ ո՞վ էր նա, որ յաղթեց Մահին (Լուսինին)», այսինքն՝ «Գիտե՞ս, թէ ո՞վ եմ ես...»։

Իսկ, թէ ո՞վ է Մանուկը, դա մէկ այլ աշխատութեան թեմա է։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Մանուկ Աբեղեան, *Երկեր*, հտ. Դ, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 20-32։

² Նոյն, էջ 20։

³ Արմենուհի Ն. Սրապեան, «Ներածութիւն», *Պատմութիւն վասն Մանկանն Եւ Աղջկանն. Պատմութիւն Յաղագս Փաշայու Թագաւորին*, աշխատասիրութեամբ Ա. Սրապեանի, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1983, էջ 5-6։

⁴ Նոյն, էջ 13-20։

⁵ Հայ Ժողովրդական Հեքիաթներ, հտ. VIII, բնագրի պատրաստումը, նախաբանը, ծանոթութիւնները, բառարանն ու ցանկերը Ա. Մ. Նազիկեանի եւ Ռ. Հ. Գրիգորեանի, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1977, էջ 214։

⁶ Նոյն, հտ. VII, հատորը տպագրութեան են պատրաստել Ա. Մ. Նազիկեանը եւ Մ. Ն. Առաքելեանը, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1979, էջ 57։

⁷ Նոյն, հտ. III, հատորը պատրաստեց եւ նախաբանը գրեց Ա. Մ. Նազիկեանը, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1962, էջ 510։ Վերնագրի մէջ, թերեւս, վրիպակ կայ. «Մա Մը»ն պէտք է կարդալ «մահը», քանի որ զրոյցի, ինչպէս նաեւ Հեքիաթի այլ տարբերակներում հերոսն իր մահն է խմում։

- ⁸ Պ. Մուրադեան, «Պատմութիւն Պղնձէ Քաղաքի» Զրոյցի Հայկական Եւ Վրացական Պատմութիւնների Ու Նրանց Փոխարարբերութեան Շուրջ», *Բանբեր Մատենադարանի*, N 6, Երեւան, 1962, էջ 249:
- ⁹ Թ. Ա. Սիմոնեան, *Հայ Միջնադարեան Կաթաներ*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1975, էջ 135:
- ¹⁰ Հ. Ն. Անդրիկեան, «Միջին Դարու Վէպերէն - Հարցմունք Աղջկան», *Բազմալէզ*, 8, Վենետիկ, 1906, էջ 344:
- ¹¹ *Kniga 1001 Nochi* (Հազար Ու Մէկ Գիշերուայ Գիրք, Թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Մ. Ա. Սալէի), հտ. V, Մոսկուա, «Նովոստի» հրատ., 1992, էջ 13-93:
- ¹² Ն. Ակինեան, «Զրոյց Պղնձէ Քաղաքի», *Հանդէս Ամսօրեայ*, 1-2, Վիեննա, 1958, էջ 24:
- ¹³ Ա. Զօպանեան, *Հայ էջեր*, Փարիզ, 1912, էջ 1Ը- ԼԹ:
- ¹⁴ Սրապեան, էջ 10:
- ¹⁵ Թ. Մկրտչեան, *Արաբական Գեղարուեստական Արձակի Նմուշների Հայ Միջնադարեան Թարգմանութիւնները*, Երեւան, Զանգակ-97, 1998, էջ 24-25, 44-45:
- ¹⁶ Ambrojo Donini, *U Istokov Khristianstva* (Քրիստոնէութեան Ակունքների Մօտ), Մոսկուա, «Պոլիտիզատ» հրատ., 1988, էջ 38-140:
- ¹⁷ *Աստուածաշունչ*, Վիեննա, 1929, Մարկոս, Ժ, 14-16:
- ¹⁸ Նոյն, Ղուկաս, Թ, 48:
- ¹⁹ Նոյն, Ղուկաս, 2, 20-25:
- ²⁰ Նոյն, Մարկոս, Ժ, 17-25:
- ²¹ Նոյն, 29-31:
- ²² Նոյն, Ղուկաս, ԺԴ, 26:
- ²³ *Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1914, էջ 424:
- ²⁴ Սրապեան, էջ 109-142:
- ²⁵ Նոյն, էջ 15-20:
- ²⁶ Նկատենք, որ զրոյցի տարբերակներում Մանուկը ոչ թէ ինքնասպանութիւն է գործում, այլ իր փոխարէն ջրհորն է իջնցնում գդակը կամ քսակը: Իսկ ջրհորի միջով մեռնելու՝ հանդերձեալ աշխարհ իջնելու մոտիւրդ ոչ թէ քրիստոնէութիւնն է ստեղծել, այլ գալիս է հեթանոսական խոր անցեալից. հմմտ.՝ Արեւելեան սլաւոններից յայտնի Անդրէյ Կրետացու եւ քրիստոնէական համանման այլ հերոսների՝ ջրհորում կամ հորում թաղուելու, ապա վերածնուելու մասին սիւժէների հետ: (Vladimir Ya. Propp, "Edip V Svete Folklor. Motiv Chudesnogo Rozhdeniya," *Folklor I Deystvitel'nost* (Էդիպոսը Բանահիւսութեան Լոյսի Ներքոյ՝ Բանահիւսութիւն Եւ Իրականութիւն գրքում), Մոսկուա, «Նաուկա» հրատ., 1976, էջ 296-298:
- ²⁷ Մանուկ Աբեղեան, *Երկեր*, հտ. Ա, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1966, էջ 384-385; Vladimir N. Toporov, "Ob Otrajenii Odnogo Indoevropeyskogo Mifa V Drevnarmyanskoy Tradicii" (Հայկական Աւանդոյթի Մէջ Մի Հնդեւրոպական Առասպելի Արտացոլման Մասին), *Պատմաբանասիրական Հանդէս*, N 3, Երեւան, 1997, էջ 97-105:
- ²⁸ *Հայ Ժողովրդական Հեքիաթներ*, հտ. II, պատրաստեց եւ առաջարանը գրեց Ա. Նազիսեանը, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1959, էջ 23:
- ²⁹ Նոյն, հտ. VII, էջ 585:

- ³⁰ Նոյն, հտ. I, պատրաստեց եւ առաջարկեց գրեց Ա. Մ. Նազինեանը, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1959, էջ 27:
- ³¹ Նոյն, էջ 49:
- ³² Նոյն, հտ. V, հատորի նախաբանը, բնագիրը եւ ծանոթագրութիւնները Ա. Մ. Նազինեանի եւ Մ. Մ. Գրիգորեանի, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1966, էջ 415:
- ³³ Ռոստամ-Ջալ Հայ-իրանական Վէպ (Ֆրիդուսի Բանաստեղծի Ծննդեան Հազարամեակին Նուիրուած Ժողովածու), Երեւան, «Արմֆան» հրատ., 1934, էջ 180-183, 189-193: *Kniga 1001 Nochi*, էջ 9-12:
- ³⁵ Ս. Բ. Յարութիւնեան, «Մի Դրուագ Հայ Առասպելաբանութիւնից» *Պատմաբանասիրական Հանդէս*, N 1, Երեւան, 1989, էջ 157-166; Vyacheslav V. Ivanov, Vladimir N. Toporov, *Issledovaniya V Oblasti Slavyanskikh Drevnostey* (Հետազոտութիւններ Սլավոնական Հնութիւնների Բնագաւառում), Մոսկուա, «Նաուկա» հրատ., 1974, էջ 31-35:
- ³⁶ Ս. Բ. Յարութիւնեան, Հայ Ժողովրդական Հանելուկներ, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1965, էջ 17-18, 68:
- ³⁷ Հ. Աճառեան, Հայերէն Արմատական Բառարան, հտ. Գ, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1977, էջ 235:
- ³⁸ Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, հտ. II, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1981, էջ 433:
- ³⁹ Մկրտչեան, էջ 26:
- ⁴⁰ Bartold Van-der Varden, *Probujoyushchayasya Nauka II. Rojdenie Ostronomii* (Արթնացող Գիտութիւն II. Աստղագիտութեան Ծնունդը), Մոսկուա, «Նաուկա» հրատ., 1991, էջ 156-157; M. Drezden, "Mifologiya Drevnego Irana" (v kn. *Mifologii Drevnego Mira*) (Հին Իրանի Դիցաբանութիւնը՝ Հին Աշխարհի Առասպելաբանութիւնները գրքում), Մոսկուա, «Նաուկա» հրատ., 1977, էջ 360-361:
- ⁴¹ Նոյն:
- ⁴² Արտա Վիրապ Նամակ. Եռլտի Ֆրիան, պահլաւերէն բնագրից թարգմանեց եւ ծանոթագրեց պրոֆ. Ռ. Թ. Աբրահամեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1958, էջ 117-137:
- ⁴³ Արտա Վիրապ, «Ներածութիւն», էջ 37:
- ⁴⁴ Արտա Վիրապ, էջ 119-120:
- ⁴⁵ Նկատի ունենք այն, որ ծնողների դէմ մեղանշելու մոտիւի ծագումը չի վերաբերում քրիստոնէութեանը, մահմեդականութեանը կամ որեւէ այլ կրօնի: Այդ մոտիւն այնքան հին է, որքան, կարծում ենք, հին են աստղային դիցաբանութեան ակունքները: Ակնհերեւ է Ռ. Գրէյվսի վերակազմած օրացուցային առասպելի համատեքստում, որի համաձայն, եղել է Լուսնային Մայր աստուածուհի, որն ունեցել է արական բնոյթով վեներա մոլորակը մարմնաւորող Որդի եւ Վիշապ ամուսին: Որդու ծնունդը պայմանաւորուած է եղել Վիշապի մահով, աւելի կոնկրէտ՝ Որդին ծնունդով, սպանել է Հօրը եւ դարձել իր Մօր ամուսինը: Սակայն տարին մէկ անգամ վերածնունդ է Վիշապը եւ զոհ է գնացել Որդին, աւելի կոնկրէտ՝ Վիշապը սպանել է Որդուն եւ կրկին դարձել լուսնային աստուածուհու ամուսինը (R. Graves, *Belaya Boginia* (Սպիտակ Աստուածուհին), Մոսկուա, 1999, էջ 447-448): Գրէյվսը չի ասում, թէ աստղային երկնքում ի՞նչ տեղ է զբաղեցնում Վիշապը, սակայն մեր կարծիքով՝ Կարիճ համաստեղութիւնն է: Դասական աստղաբաշխութեան մէջ երեկոյեան ծագմամբ վեներայի գիշերային տունն է համարուել Ցուլ համաստեղութիւնը՝ Ապրիլ ամսից սկսած, որտեղ իր բարձրակէտին է հասնում Լուսինը: Կշեռքում վեներայի ցերեկային տունն է (այսինքն՝ ծա-

գում է լուսարացին), իսկ Կարիճում թալկացում ունի (A. Y. Saplin, *Astrologicheskiy Entsiklopedicheskiy Slovar* (Աստղաբաշխական Հանրագիտարանային Բառարան), Մոսկուա, 2001, էջ 99, 254): Երբ Ապրիլին ծագել են Կարիճի աստղերը, Ցուլն ամսուայ վերջում ամբողջովին իջել է հորիզոնից ներքեւ (գետնի տակ) եւ «մեռել»: Կարելի է կարծել, որ ցուլը վեներայի խորհրդանիշն է, եթէ ոչ՝ ինքը վեներան, քանի որ *Գիլգամէշ* էպոսում էլ իշթարն է (=վեներան) Գիլգամէշի դէմ ուղարկում ցուլին, որը սպանւում է վերջինիս ձեռքով (*Հին Արեւելքի Պոեզիա*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1982, էջ 129-130): Սերբերն ու խորուածները վեներային ուղղակիորէն Ցուլաստղ են անուանում (Y. A. Karpenko, *Nazvania Zvizdnogo Neba* (Աստղային Երկնքի Անուանումները), Մոսկուա, 1981, էջ 80): Կարծում ենք, որ Քրիստոսին քաջ յայտնի են եղել վեներայի հետ կապուած առասպելական պատկերացումները, այլապէս չէր ասի, թէ՛ «Ես եմ...առաւօտեան պայծառ աստղը» (Յայտնութիւն, գլ. ԻԲ, 16), այսինքն՝ վեներա մոլորակը, որ հայ քրիստոնէական մատենագրութեան մէջ «Արդարութեան Արեգակ» է անուանւում (*Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի*, հտ. I, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1979, էջ 374), իսկ Արդարութեան Արեգակն ինքը Քրիստոսն է (Արեղեան, *Երկեր*, հտ. Դ, էջ 360-365): Քրիստոնէութիւնը պարզապէս վերաիմաստաւորել է հեթանոսական ըմբռումները՝ առաջ քաշելով արիւնակցական, հարազատական կապերը երկնային արքայութեանը հասնելու ձգտումներին ստորադասելու առաւել ընդունելի դիրքորոշումը: Եւ եթէ Քրիստոսը Ղուկասի եւ Մարկոսի աւետարաններում (ԺԴ, 25-27, Ժ, 29-31) կոչ է անում թողնել չորը, մօրը եւ մերձաւոր հարազատներին՝ հետեւել իրեն յաւիտենական կեանքի հասնելու նպատակով, ապա դրանով ոչ թէ մեղքի է մղում, այլ հոգեւոր կատարելութեան ձգտմանն, աստուածային էութեանը միանալու եւ հոգեւոր անմահութեան գաղափարներն է առաջ քաշում: Սա արդէն աստղային դիցաբանութիւն չէ, այլ միանգամայն երկրային, մարդկային հաւատամբ:

⁴⁶ Evripid, “Finikiyanki ” (v kn. *Tragedii*) (Փիւնիկուհիներ՝ Ողբերգութիւններ գրքում), հտ. II, Մոսկուա, «Նաուկա» հրատ., 1969, էջ 165-167:

⁴⁷ V. N. Yarkho, “Tragicheskiy Teatr Sofokla” (v kn. *Sofokl, Drami*) (Սոֆոկլէսի Ողբերգական Թատրոնը-Սոֆոկլէսի Դրամաներ գրքում), Մոսկուա, «Նաուկա» հրատ., 1990, էջ 482:

⁴⁸ S. S. Averintsev, “K Tolkovaniyu Simvoliki Mifa O Edipe” (v kn. *Antichnost I Sovremennost*), (Էդիպոսի Առասպելի Խորհրդանիշերի Համակարգի Մեկնաբանման Խնդրի Շուրջ՝ Հնութիւն Եւ Արդիականութիւն գրքում), Մոսկուա, «Նաուկա» հրատ., 1972, էջ 90-102:

⁴⁹ Propp, էջ 266-267, 270-272, 278-280:

⁵⁰ Mifi Narodov Mira (Աշխարհի Ժողովուրդների Առասպելները), հտ. II, Մոսկուա, 1992, էջ 657:

⁵¹ Averintsev:

⁵² Ambrojo Donini, էջ 128-130:

⁵³ Պատմութիւն Վասն Մանկանն, էջ 105:

⁵⁴ Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, հտ. II, էջ 206:

⁵⁵ Յովհաննու, Գ, 3-9:

⁵⁶ Ղուկաս, ԺԲ, 32-34:

⁵⁷ Հ. Աճառեան, Հայերէն Արմատական Բառարան, հտ. Ա, Երեւանի Համալսարանի Հրատ., 1971, էջ 618:

- ⁵⁸ Ա. Գ. Արրահամեան, *Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը*, Երեւանի Մատենադարանի Հրատ., 1944, էջ 325-326:
- ⁵⁹ Յ. Ա. Մարտիրոսեան, *Գրողութիւնը Սկսում է Նախնադարում*, Երեւան, «Սովետական գրող» հրատ., 1978, էջ 87:
- ⁶⁰ Աբեղեան, *Երկեր*, հտ. Է, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1975, էջ 71:
- ⁶¹ Կ. Մելիք-Փաշայեան, *Անահիտ Դիցուհու Պաշտամունքը*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ, 1963, էջ 68:
- ⁶² Աճառեան, հտ. Գ, էջ 235:
- ⁶³ Գ. Սրուանձտեանց, *Երկեր*, հտ. 1, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան ինստիտուտ, 1978, էջ 76:
- ⁶⁴ Աբեղեան, հտ. Է, էջ 70:
- ⁶⁵ Սասնայ Ծռեր, հտ. Ա, Երեւան, «Հայպետհրատ», 1936, էջ 307-308:
- ⁶⁶ Ռ. Ա. Ղազարեան, Յ. Մ. Աւետիսեան, Միքիլ Հայերէնի Բառարան, հտ. Բ, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1992, էջ 150-151:
- ⁶⁷ Նոյն, էջ 76:
- ⁶⁸ Աճառեանը հայ հին մատենագրութեան տուեալների վրայ յենուելով, տալիս է «ղուպայ» կամ «կուպայ», «կուբայ» բառերի իմաստաբանական մէկ այլ բացատրութիւն եւս՝ առանց յիշատակելու «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցում եղած գործածութիւնը: Յիշուել է «Քրիստոսի գերեզմանի գմբէր կամ մատուռը» նշանակութեամբ: Մէկ անգամ էլ հանդիպում է «հեծանելի ուղտի վրայ շինուած գմբէրի» իմաստով: «Նստեալ ի յուղտ, նորկազմ զարդոյս պաճուճեալ ականակոտ թամբօք. եւ դուպայ ոսկի ընդելուզեալ ի շարս մարգարտաց գմբէրազարդ ի վերայ նորա» (Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան*, հտ. Բ, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1973, էջ 661):
- ⁶⁹ Հանդէս *Գրականական Եւ Պատմական*, գիրք 1, Մոսկուա, 1888, էջ 372:
- ⁷⁰ Մկրտչեան, էջ 41-43, 127, ծանօթ. 146:
- ⁷¹ Այն, ինչ ասում է Աղջկայ լուսնային բնութագրի մասին, անշուշտ, չի առնչւում քրիստոնէական ըմբռնումներին եւ, ինչպէս կարելի է նկատել, գալիս է դեռեւս խոր հեթանոսական անցեալից: Հին աշխարհին են պատկանում այնպիսի դիցաբանական ըմբռնումներ, որոնք մեռեալների (որպիսին է «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի Մանուկը) հոգիներն անմիջականօրէն Լուսնի հետ են կապում: Հնդկաստանի հաւատալիքներում, օրինակ, իրենց վերամարմնաւորմանը սպասող հոգիներն ապաւինում էին Լուսնի անցած ճանապարհին, մինչդեռ Արեւի անցած ճանապարհը համարւում էր «Աստուածների ուղի»: Յունական աստղային դիցաբանութեան մէջ լուսնի վրայ են գտնւում Ելիսէեան դաշտերը, ուր մահուանից յետոյ ուղեւորւում են հերոսներն ու կեանքները: Առաւել վառ նմոյշ է պահպանուել իրանական աւանդութեան մէջ, ուր մեռեալների հոգիները, եթէ բարի են եւ առաքինի, անցնում են դէպի աստղերը տանող Ջինվատ կամրջի վրայով, ուղեւորւում նախ լուսին, այնուհետեւ մտնում արեւի մէջ (M. Eliade, *Patterns In Comparative Religion*, Լոնդոն, 1983, էջ 172): Մինչդեռ քրիստոնեայ քարոզչական բնոյթ ունեցող գրականութեան մէջ տրամաբանօրէն, ապաշխարող Մանուկից հանդերձեալ աշխարհում հոգեւոր կեանքի քննութիւն պէտք է վերջնէր Աստուած եւ ոչ թէ Լուսինը: Բայց, ինչպէս ասել ենք, ի դէմս «Վասն Մանկանն Եւ Աղջկանն» գրոյցի, մենք գործ ունենք ոչ թէ սոսկ քրիստոնէական ուղղագիծ քարոզների, այլ հոգեւոր-այլաբանական գրականութեան հետ: Իսկ այդ գրականութիւն

ներ հին առասպելները վերաճեցում էր ըստ իր աշխարհայեացքի եւ համապատասխան ալլաբանական մեկնաբանութիւններ տալիս (Արեղեան, հտ. Գ, էջ 110-111): Այդպիսի մօտեցումը հնարաւոր կարող էր լինել միայն այն դէպքում, եթէ հին առասպելները յարատեւէին նաեւ միջնադարում կամ գոնէ կորած չլինէր յուշը նրանց մասին: Հակառակ դէպքում անիմաստ կը լինէր հեթանոսական դարերի բանահիւսական նիւթը հոգեւոր-ալլաբանական գրականութեան լոյսի ներքոյ ներկայացնելը, քանի որ անըմբռնելի կը մնար ժողովրդական գանգուածներին:

CERTAIN ALLEGORIC CODES IN THE TALE OF
“ABOUT THE CHILD AND THE GIRL” IN THE LIGHT OF
MEDIEVAL ARMENIAN SPIRITUAL-ALLEGORIC LITERATURE
(Summary)

GAGIK MARTOYAN

Armenia witnessed a period of economic prosperity and abundance during the Bagratide kingdom (10th and 11th centuries). The improved living conditions were conducive to more leisurely behaviour and attitude towards life. This led to a conflict between spiritual and material values in life.

A reflection of this clash was in the revival of old legends and myths vested with Christian values and interpretations.

The tale of “About the Child and the Girl” is a medieval translation with a narrative putting the image of a Christian youngster (“manuk”) in the format of an internationally known folk tale. It was circulated to promote Christian values, glorify spiritual life, repentance, piety, prudence, and frugality.

Martoyan tries to combine the mythical section of the story, which has to do with the hero solving the riddles raised by the princess and later marrying her, with the Biblical teachings of Jesus that one needs to quit all earthly fortunes and follow the word of God. In matching the young hero with the mythological sun and the princess with the moon, Martoyan underpins his argument by drawing in mythological elements found in the tale. Some of these are drinking the water, being hosted by an old woman, fighting against the dragon who controls the town spring, etc. On the other hand, the hero in the tale is named “child” which has the dual meaning. He can be a soldier of Christian faith, and it reminds us of Jesus’s call that in order to get into heaven one has to be like a child.